ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2019/18

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.01.2019թ. թիվ 26-3/603-19 գրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 15.01.2019թ. թիվ ԴՎԱ/98 գրության հիման վրա, 21.01.2019թ. «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 15.01.2019թ. թիվ ԴՎԱ/98 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 06.07.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/28-4 և N ԲՄԱՊՁԲ-7/33-2 ծածկագրերով պայմանագրերի 2.1.7.1 կետի «բ» ենթակետերը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. հունվարի 9-ից միակողմանի մասնակի լուծել է N ԳՀԱՊՁԲ-7/28-4 և N ԲՄԱՊՁԲ-7/33-2 պայմանագրերը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրերի լուծման վերաբերյալ գրությունը 11.01.2019թ. հրապարակվել է www.gnumner.am կայքում»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.01.2019թ. գրությամբ դիմել է «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.01.2019թ. թիվ 26-3/603-19 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

«ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/18 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 21.01.2019թ. թիվ 26-3/603-19 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 15.01.2019թ. թիվ ԴՎԱ/98 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 06.07.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/28-4 և N ԲՄԱՊՁԲ-7/33-2 ծածկագերով պայմանագրերը, Պատվիրատուի կողմից 10.01.2019թ. «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին ուղղված թիվ ԴՎԱ/36 գրությունը, ՀՀ ԶՈՒ ԹԻԿՈՒՆՔԻ վարչության պետի 17.12.2018թ թիվ 5828 գրությունը ուղղված ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին:

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 06.07.2018թ. կնքվել են N ԳՀԱՊՁԲ-7/28-4 և N ԲՄԱՊՁԲ-7/33-2 ծածկագերով պայմանագրեր (այսուհետ՝ նաև Պայմանագրեր):

Պայմանագրերի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով՝ Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:
- 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետը խախտվել է 30 օրից ավելի:
- 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:
- 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:
- 8.1 կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

• 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

N ԲՄԱՊՁԲ-7/33-2 ծածկագրով պայմանագրի գնման ժամանակացույց թիվ 1 հավելվածի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2018թ. 3-րդ եռամսյակում մատակարարել թվով 140 հատ վերմակ:

N ԳՀԱՊՁԲ-7/28-4 ծածկագրով պայմանագրի գնման ժամանակացույց թիվ 1 հավելվածի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2018թ. օգոստոս ամսին մատակարարել թվով 75 լրակազմ սպորտային հագուստ (կոստյում սպորտային ձմեռային):

ՀՀ ԶՈՒ ԹԻԿՈՒՆՔԻ վարչության պետը 17.12.2018թ թիվ 5828 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին հայտնել է՝հետևյալը.

«Ձեզ եմ ներկայացնում նյութական միջոցների մատակարարման գործընթացում թերացած «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերը, որոնք ենթակա են միակողմանի լուծման, համաձայն պայմանագրերի՝ 2-րդ կետի 2.1 ենթակետի «Գնորդն իրավունք ունի» 2.1.1 կետով սահմանված «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետը խախտվել է 30 օրից ավելի, ընդ որում՝

1. 15.06.2018թ. N ԳՀԱՊՁԲ-7/28-4 պայմանագրով՝ կոստյում սպորտային ձմեռային՝ 75 լրակազմ,

2. 15.06.2018թ. N ԲՄԱՊՁԲ-7/33-2 պայմանագրով՝ վերմակ 201x150x5սմ՝140 հատ:»:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետը 27.12.2018թ. ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ներկայացված զեկուցագրով հայտնել է հետևյալը.

«Զեկուցում եմ Ձեզ, որ ՀՀ ԶՈՒ ԹԻԿՈՒՆՔԻ վարչության կողմից առաջարկվել է, հիմք ընդունելով պայմանագրերի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները (խախտվել է ապրանքների մատակարարման ժամկետը), սկսել միակողմանի լուծման գործընթաց՝ ՀՀ

պաշտպանության նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև կնքված ստորև նշված պայմանագրերի մասով.

- N ԳՀԱՊՁԲ-7/28-4 կոստյում սպորտային ձմեռային - 75 լ.կ,
- N ԲՄԱՊՁԲ-7/33-2 վերմակ 201x150x5սմ – 140 հատ:

Ելնելով վերոգրյալից առաջարկում եմ հանձնարարել ՀՀ պաշտպանության նախարարության ԳՓՁ վարչությանը՝ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև կնքված վերոհիշյալ ծածկագրերով պայմանագրերը նշված ապրանքատեսակների մասով միակողմանի լուծել»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 10.01.2019թ. թիվ ԴՎԱ/36 գրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 06.07.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/28-4 և N ԲՄԱՊՁԲ-7/33-2 ծածկագրերով պայմանագրերի (այսուհետ՝ նաև Պայմանագրեր) շրջանակներում Ձեր Ընկերությունը համապատասխանաբար 2018թ. օգոստոս ամսին ք. Երևան, Արցախի 61փ. հասցեյով պետք է մատակարարեր 75 լրակազմ կոստյում սպորտային ձմեռային և 2018թ. երրորդ եռամսյակում ք. Երևան, Արցախի 61 փ. հասցեյով պետք է մատակարարեր 140 հատ վերմակ (201x150x5սմ), սակայն մատակարարումներ չեն իրականացվել:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրերի 2.1.7.1 կետի «բ» ենթակետերը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. հունվարի 9-ից միակողմանի մասնակի լուծել է N ԳՀԱՊՁԲ-7/28-4 և N ԲՄԱՊՁԲ-7/33-2 պայմանագրերը:

Տեղեկացնում եմ, որ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն պարտավոր է նույն ծանուցումը սանալուց հետո հինգ բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 8136.5 ՀՀ դրամ որպես տույժ Պայմանագրերի 6.2 կետերի համաձայն»:

Միաժամանակ ՀՀ պաշտպանության նախարարությունը N ԳՀԱՊՁԲ-7/28-4 և N ԲՄԱՊՁԲ-7/33-2 ծածկագրերով գնման պայմանագրերը լուծելու մասին հայտարարությունը 11.01.2019թ. հրապարակել է www.procurement.am կայքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով,

ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 06.07.2018թ. կնքվել են N ԳՀԱՊՁԲ-7/28-4 և N ԲՄԱՊՁԲ-7/33-2 ծածկագերով պայմանագրեր:

- N ԲՄԱՊՁԲ-7/33-2 ծածկագրով պայմանագրի գնման ժամանակացույց թիվ 1 հավելվածի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2018թ. 3-րդ եռամսյակներում մատակարարել թվով 140 հատ վերմակ:
- N ԳՀԱՊՁԲ-7/28-4 ծածկագրով պայմանագրի գնման ժամանակացույց թիվ 1 հավելվածի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2018թ. օգոստոս ամսին մատակարարել թվով 75 լրակազմ սպորտային հագուստ (կոստյում սպորտային ձմեռային):
- «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի մատակարարվել Պայմանագրերով նախատեսված ապրանքները:
- ՀՀ պաշտպանության նախարարությունը N ԳՀԱՊՁԲ-7/28-4 և N ԲՄԱՊՁԲ-7/33-2 ծածկագրերով գնման պայմանագրերը լուծելու մասին հայտարարությունը 11.01.2019թ. հրապարակել է www.procurement.am կայքում:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն Պայմանագրերով նախատեսված ապրանքները սահմանված ժամկետներում չմատակարարելով՝ խախտել է 06.07.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/28-4 և N ԲՄԱՊՁԲ-7/33-2 ծածկագրերով պայմանագրերի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրերի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.01.2019թ. թիվ 26-3/603-19 գրությամբ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**